ՁԱՆԵՌՆ ԵԿԱՒ...

ՍԻՐՈՒՆ ԵՂԲՕՐՕՐԴԻՆԵՐՈՒՍ

ԴԻԶՈՒԱԶԵՐՍ բո՛ւրը հողմունք՝ Զմրան գալո՛ւստը կ'ոգեն.
Ցարե՛ր քն համայն փրքոցու�հոյց շեփորափո՛ղն է անոր՝
Որ կը հընչէ, կը ճըռընչէ, կը մըռընչէ սաստկօրէն
Հազարաւոր եղանակներ՝ բի՛ւր շեշտերով նորանոր։

Երկինք՝ գրակա՛ն իւր բարձրարե՛ր, ամպերն ըստուար՝ երգարա՛ն,
Եւ սպիտափառ ձեան փաթիլնե՛ր են իւր տառե՛ր ու խազեր...
Կը կաքաւեն՝ ծառե՛ր լերկ, իրեր անշարժ անկենդան
Ողջունելով Զմեռն արծաթ՝ որ ամէն տեղ է բազմեր...

Քամին լռե՛ց. — Ձերմակափայլ ձիւնն արդ դիզուա՛ծ է խաւ խաւ.
Դո՛ւրս վազեցէք, ամբիծ երկրիս հարսնի՛ք արի՛ք տօնելո՛ւ...
Հա՛պ'օ՛ն, ընկերք, դո՛ւրս վազեցէք, արծաթ Զմե՛ռն եկաւ.
Փափկիկ ձիւնէն պի՛նդ գընդակնե՛ր... Ագռաւներուն ալէլո՛ւ։

Շուտո՛վ, տըղաք, դո՛ւրս քաշեցէք սահնակներն, հէ՛, ցընծալով,
Դո՛ւրս քաշեցէք մո՛ւթ ծակերէն սահնակներդ, օ՛ն, պողպատիկ.
Դուրս վազեցէք՝ Սերգո՛յ, Վահա՛ն, Ցովակի՛մ...
Արի՛ք խաղա՛նք, օ՛ղը ծրծենք զովագի՛ն...
Վազե՛նք վեր սա՛ռն հոն մըրցելու, նորեկ Զմրան տա՛նք բարով,
Դո՛ւրս վազեցէք, դո՛ւրս վազեցէք, — եկաւ Զմե՛ռն արծաթիկ։

ԳԻՄ–ԱՅՐ



digitised by A.R.A.R.@